



ԱՐԱՊԵՏ (ծն. 1779 Յուլիս 28) այնպէս սիրելի եղած էր թագաւորին, որ Վեհ. Սուլթանն հաճեցաւ անգամ մը կարապետ Չէլէպուոյ պագուոյն մէջ ընթրել. և իբր նշան իւր գոհութեան՝ օր մը իւր Վեհ. մայրն ալ մասնակից ըրաւ կարապետի արժանաւոր հիւրասիրութեան: Օսմանեան պետութեան բարձր շքանշաններէն շատերն ունէր. մասնաւոր յիշատակութեան արժանի է 1849 ին ընդունած Ինֆոլէի վալայի աստիճանն, որով ամէն զինուոր պարտական էր իրեն ողջօյն տալ, որ դեռ բոլայի մը եղած չէր: Թող օտար տէրութեանց կողմանէ ընդունածներն, որոնք ամէնքն ի միասին թուով 12 հատ էին: 1850 Յուն. 22 ին Վեհ. Սուլթանն՝ ի նշան իւր համարմանն զկարապետ Պէյութեան աստիճանն հասցուց և Վեհ. Արքայամօր սեղանաւոր կարգեց: Իւր հասուն ծերութեանը ժամանակ՝ կարապետ հրա-